ԾԱՆՈՒՑՈՒՄ՝ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԵՌԱՎԱՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ

08.07.2016 20:20

Հարգելի փաստաբաններ,

Տեղեկացնում ենք, որ 2016թ. հուլիսի 15-ից սկսվելու է փաստաբանների **հեռավա**ր (համացանցի միջոցով միաժամանակյա դիտման ռեժիմում) վերապատրաստման հարթակի գործարկումը:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 18.12.2014թ. 35/8-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված **Փաստաբանների վերապատրաստման կարգի** (այսուհետ՝ Կարգ) 11-րդ կետի համաձայն՝ *հեռավար ձևով վերապատրաստմանը կարող են մասնակցել միայն՝*

• *Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի վարչական տարածքներում* ***հաշվառված և գործունեություն ծավալող փաստաբանները***.

• *այլ պետությունում գտնվող փաստաբանները.*

• *տեղաշարժման սահմանափակումներով պայմանավորված առողջական խնդիրներ ունեցող փաստաբանները՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի որոշման հիման վրա.*

• *այն փաստաբանները, որոնց թույլատրված է մասնակցել կոնկրետ թեմայով վերապատրաստմանը և հայտարարության մեջ նախապես տեղեկացված են տվյալ վերապատրաստման դասընթացը հեռավար ձևով անցնելու մասին:*

Վերոգրյալը հաշվի առնելով, հեռավար վերապատրաստման դասընթացներին կարող են մասնակցել միայն այն փաստաբանները, ովքեր ՀՀ փաստաբանների պալատ դիմում կներկայացնեն հեռավար դասընթացներին մասնակցելու վերաբերյալ՝ կցելով Կարգի 11-րդ կետում սահմանված կարգավիճակը հավաստող փաստաթուղթ:

Դիմումները կարող եք ներկայացնել նաև էլեկտրոնային փոստի միջոցով՝ Ձեր կողմից ստորագրված դիմումի սկան արված տարբերակն ուղարկելով **ani.gharibyan@advocates.am** էլ. հասցեին:

Մյուս անհրաժեշտ նյութերին (այդ թվում՝ պարզաբանման տեսագրությանը) կարող եք ծանոթանալ www.advocates.am կայքի **«Վերապատրաստում» հավելվածում**:

Բեռնել հեռավար վերապատրաստումներին մասնակցելու մասին դիմումի ձևը.

Բեռնել «Հեռավար ձևով վերապատրաստման իրականացման» կարգը.

Բեռնել հեռավար ձևով վերապատրաստման վերաբերյալ Ծանուցումը (նկարագրությունը).

Հարգանքով՝
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
աշխատակազմ

Առաջարկվող նորություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄ

02.11.2015ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՐԳՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼ ԵՆ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

06.10.2020ՍԱՀՄԱՆՎԵԼ ԵՆ ԱՆԴԱՄԱՎՃԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })